

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵԼԼԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ՝ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Նելլի Աղաջանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի ռադիոակտիվ թափոնների բաժնի պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Վիեննա, 20-25 մայիսի 2018թ.
4. **Հրավիրող կողմը՝** ԱԷՄԳ
5. **Գործուղման նպատակը՝** մասնակցություն «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիայի (այսուհետ՝ Համատեղ կոնվենցիա) կողմ հանդիսացող պետությունների ազգային հաշվետվությունների 6-րդ դիտարկման հանդիպմանը.
 - ✓ ներկայացնելու ազգային զեկույց Համատեղ կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման մասին.
 - ✓ քննարկելու Համատեղ կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվությունը և պատասխանելու ՀՀ ազգային հաշվետվության դիտարկման արդյունքում կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից տրված հարցերին.
 - ✓ դիտարկելու Համատեղ կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից ներկայացված առաջարկությունները:
6. **Քննարկված թեմաները.**
 - ✓ աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման Հայաստանի Հանրապետության քաղաքականությունն ու ռազմավարությունը.
 - ✓ ՀՀ-ում աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության ապահովմանն ու բարձրացմանն ուղղված միջոցառումները.
 - ✓ Համատեղ կոնվենցիայի 5-րդ դիտարկման հանդիպման ժամանակ արձանագրված առաջարկությունների ու մարտահրավերների ուղղությամբ Հայաստանի Հանրապետության իրականացրած քայլերը.

- ✓ հաշվետու ժամանակահատվածում աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ՀՀ ազգային ծրագրում տեղ գտած փոփոխություններն ու ներկայիս մարտահրավերները.
- ✓ ՀՀ ազգային 2-րդ հաշվետվության, ինչպես նաև ազգային զեկույցի դիտարկման արդյունքում կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների ներկայացրած հարցերը.
- ✓ Աշխատանքային 6-րդ խմբում ներառված երկրներում աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման հիմնարար խնդիրների բացահայտում և քննարկում.
- ✓ Համատեղ կոնվենցիայում փոփոխություններ կատարելու մի շարք երկրների առաջարկությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համատեղ կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման քննարկմանը մասնակցեցին Շվեդիայի, Չինաստանի, Նորվեգիայի, Ալբանիայի, Իսլանդիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Կանադայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Կորեայի և Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության ներկայացուցիչները:

Մասնակիցների հարցերը մասնավորապես վերաբերվում էին.

- ✓ Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման Հայաստանի Հանրապետության ռազմավարությանը և ռազմավարության դրույթների իրականացման միջոցառումների ծրագրի նախագծին.
- ✓ Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ֆինանսավորման առկա համակարգին և հեռանկարներին.
- ✓ Աշխատած վառելիքի, ինչպես նաև ռադիոակտիվ թափոնների կառավարման վերջնակետը (endpoint) սահմանելուն:

Արձանագրվեց, որ **հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները.**

- ✓ Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ռազմավարությունը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից.
- ✓ Ռազմավարությունն ամրագրում է ռադիոակտիվ թափոնների կառավարման ֆինանսական բեռը ռադիոակտիվ թափոն առաջացնողի կողմից կրելու «աղտոտողն է վճարում» սկզբունքը.

- ✓ ՀՀ կառավարությունը 2017 թվականի հոկտեմբերի 12-ին N 1249-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության առաջին էներգաբլոկը շահագործումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին և հանձնարարել սահմանված կարգով այն ներկայացնել Ազգային ժողով:
- ✓ ՀՀ օրենսդրական և կարգավորող դաշտը շարունակաբար լրամշակվել/բարելավվել է հաշվետու ժամանակահատվածում՝ ուղղված համապատասխանեցնելու միջազգային ստանդարտներին:

Համատեղ կոնվենցիայի նախորդ՝ **5-րդ դիտարկման հանդիպման ժամանակ արձանագրված առաջարկությունների ու մարտահրավերների ուղղությամբ** Հայաստանի Հանրապետությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները.

1. Անվտանգության բարելավման միջոցառումներ.

- աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային ռազմավարության ընդունում 2017 թվականին.
- ռադիոակտիվ թափոնների կառավարման առկա համակարգի փոփոխում՝ ուղղված ԱԷՄԳ-ի OSART (Operational Safety Review Team) առաքելության առաջարկությունների իրականացմանը.
- կարգավորող մարմնի գործունեության դիտարկման ԱԷՄԳ-ի IRRS (Integrated Regulatory Review Services) առաքելության ընդունում 2015 թվականին.
- «աղային հալոյթով» տակառների վերամշակման և անվտանգ պահման տեղակայանքի կառուցման վերաբերյալ քննարկումներ/նախաձեռնություններ.

2. Ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների և աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման առկայության ուղղությամբ.

- կառավարության կողմից հաստատված ազգային ռազմավարությունը նախատեսում է «աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրառումը, երբ ռադիոակտիվ թափոն առաջացնողը պետք է կրի դրա անվտանգ կառավարման համար ֆինանսական պարտավորություններ.
- Հայաստանի Հանրապետությունը ներգրավել է «երրորդ անձանց» ռադիոակտիվ թափոնների կառավարման ֆինանսավորման հարցերի լուծմանը աջակցելու համար:

3. Միջազգային փորձագիտական օգնությունից կախվածությունը նվազեցնելու նպատակով մարդկային ռեսուրսների կարողությունների ստեղծման և գիտելիքների փոխանցման ուղղությամբ.

- ԱԷՄԳ-ի, ԵՀ-ի և ԱՄՆ-ի միջուկային կարգավորող հանձնաժողովի կազմակերպած դասընթացներն ու սեմինարները նպաստում են գիտելիքների փոխանցմանը.
- 2016-2018 թվականներին իրականացվել է միջուկային անվտանգության բնագավառում Եվրոպական Հանձնաժողովի հետ համագործակցության INSC նախագիծ՝ ուղղված ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և իր գիտատեխնիկական աջակցության կենտրոնի կարողությունների ամրապնդմանը ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների և աշխատանքների անվտանգության դիտարկման, գնահատման և որոշումների կայացման ուղղությամբ:

4. Հայկական ԱԷԿ-ի 1-ին էներգաբլոկի շահագործումից հանման ուղղությամբ.

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2017 թվականի հոկտեմբերի 12-ին N 1249-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության առաջին էներգաբլոկը շահագործումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությանը:

Համատեղ կոնվենցիայի նախորդ՝ **5-րդ դիտարկման հանդիպման ժամանակ արձանագրված համընդհանուր/հիմնարար հարցերի (overarching issues) ուղղությամբ** Հայաստանի Հանրապետությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները.

1. Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական մարդկային ռեսուրսների ապահովման ուղղությամբ.

- Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարումն ապահովվում է ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի սակագնից մասհանումների միջոցով.
- Ստեղծված է ՀԱԷԿ-ի շահագործումից հանման հատուկ հիմնադրամ և արգելվում է օգտագործել այս հիմնադրամում կուտակված ֆինանսական միջոցները այլ նպատակներով.
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը և Երևանի պետական համալսարանը ոլորտի գիտելիքների փոխանցման և մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման հիմնական կրթական հաստատություններն են.

- Ռադիոակտիվ թափոնների կառավարման գծով անձնակազմի որակավորումն ապահովվում է նրանց հավաքագրման, վերապատրաստման, որակավորման պահպանման և բարելավման աշխատանքների միջոցով:
2. *Հասարակությանը տեղեկատվության տրամադրման և շրջակա միջավայրի վրա ազդեցություն/հետևանք ունեցող աշխատանքների և տեղակայանքների վերաբերյալ որոշումներ կայացնելու ժամանակ հասարակության ներգրավվածն ուղղությամբ.*
- Կոմիտեի կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը հրապարակվում են կոմիտեի ինտերնետային էջում, հանրային տեղեկատվության և կարծիքի համար՝ մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը.
 - Կոմիտեն պարբերաբար թարմացնում է իր ինտերնետային էջում տեղադրվող տեղեկատվությունը միջուկային տեղակայանքներում միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորման վերաբերյալ.
 - Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի շինարարության դեպքում հանրային ներգրավվածության և իրազեկման վերաբերյալ դրույթները սահմանված են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում:
 - Միջուկային տեղակայանքի հրապարակի ընտրության լիցենզայի հայտին կից ներկայացվող փաստաթղթերը ներառում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների և ազդակիր համայնքի բնակչության հետ հասարակական քննարկումների արդյունքները:
3. *Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման վաղ փուլում դրանց կայուն և ամբողջական (մինչև վերջնակետ՝ թաղում) կառավարման ռազմավարություն մշակելու և իրականացնելու ուղղությամբ.*
- Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման 2018-2088թ.թ. ռազմավարությունը մշակվել է հիմք ընդունելով 2013-2015 թվականներին Եվրոպական Հանձնաժողովի հետ համագործակցության նախագծի արդյունքները և ի կատարումն ԱԷՄԳ-ի IRRS առաքելության առաջարկությունը: Ռազմավարությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի նիստի N 42 արձանագրային որոշմամբ:
4. *Հետագա օգտագործման համար չնախատեսված իոնիզացնող ճառագայթման փակ աղբյուրների կառավարման ուղղությամբ.*

- Հետագա օգտագործման համար չնախատեսված I, II և III դասի ռադիոիզոտոպային աղբյուրները պետք է վերադարձվեն արտադրողին՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1479-Ն որոշման.
- Հետագա օգտագործման համար չնախատեսված ռադիոիզոտոպային աղբյուրները համարվում են պինդ ռադիոակտիվ թափոններ և կառավարվում համապատասխանորեն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Քննարկման արդյունքում Համատեղ կոնվենցիայի 6-րդ դիտարկման հանդիպման աշխատանքային 6-րդ խմբի գեկուցողի կողմից արձանագրվեց.

1. Աշխատանքի լավ կատարում (Areas of Good Performance).

- Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային ռազմավարության հաստատումը կառավարության կողմից.
- «Անվտանգության կուլտուրայի և անվտանգության կառավարման համակարգի» պարբերաբար ինքնազնահատում յուրաքանչյուր 3 տարին մեկ՝ ուղղված անվտանգության կուլտուրայի բարելավման.
- Բարելավվել է երկրի/ազգային մակարդակով գիտելիքների փոխանցման և մարդկային ռեսուրսների/կարողությունների ստեղծման գործընթացը՝ ուղղված նվազեցնելու կախվածությունը միջազգային փորձագիտական օգնությունից.

2. Մարտահրավերներ.

- Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի ներդրումը/իրականացումը.
- Աշխատած վառելիքի ՀԱԷԿ-ի տարածքում պահման հնարավորությունների/պահեստարանի ընդարձակումը.
- «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության առաջին էներգաբլոկը շահագործումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն ու կիրարկումը, շահագործումից հանման պլանի ներդրման նախաձեռնումը.
- Շահագործումից հանման համար բավարար ֆինանսական միջոցների ստեղծում/ապահովումը.
- Ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների և աշխատանքների իրականացման համար բավարար ֆինանսական միջոցների ստեղծումը/ապահովումը.

- Աշխատած վառելիքի կառավարման վերջնակետի (endpoint) սահմանումը:

3. Առաջարկություններ.

- Արդիականացնել ռադիոակտիվ թափոնների կառավարումը ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների շրջանակներում.
- Շարունակել միջազգային համագործակցության կիրառումը/օգտագործումը ՀՀ-ում աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակների համար, օրինակ՝ աշխատած վառելիքի կառավարման, գնագնահատման և այլն.

4. Անվտանգության բարելավման պլանավորված միջոցառումներ.

- Իրագործել «ՀՀ-ում առաջացած ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարության» դրույթները՝ հաստատված ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի նիստի N 42 արձանագրային որոշմամբ և ներդնել ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող 2018-2026թթ. միջոցառումների ծրագիրը, որը ներառում է մի շարք գործողություններ, օրինակ՝ ազգային օպերատորի ստեղծումը, «աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրարկումը և այլն.
- Ավարտել կարգավորող մարմնի գործունեության դիտարկման ԱԷՄԳ-ի IRRS (Integrated Regulatory Review Services) առաքելության կողմից տրված առաջարկությունների և խորհուրդների իրականացման 2015-2018 թթ. գործողությունների ծրագիրը.
- ՀԱԷԿ-ի շահագործումից հանումը փոխկապակցված է աշխատած վառելիքի կառավարման հետ՝ քանի դեռ չոր պահման տեխնոլոգիան օգտագործվում է ՀԱԷԿ-ում, պահպանման ավազանները իրենց համապատասխան ենթակառուցվածքներով պետք է պահվեն «ֆունկցիոնալ» ապահովելու չոր պահման հետ կապված կարիքները/աշխատանքները:

6-րդ դիտարկման հանդիպման ժամանակ քննարկվեցին նաև **Համատեղ կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ** կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից ներկայացված հետևյալ **առաջարկությունները.**

- Կանադայի առաջարկությունը՝ անվավեր ճանաչել INFCIRC/603/Rev.7 ուղեցույցի 48.-րդ կետի պահանջը, ըստ որի Համատեղ կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունը պետք է ներկայացնի իր ազգային զեկույցի թղթային 1 օրինակը Համատեղ կոնվենցիայի ԱԷՄԳ-ի քարտուղարություն:

- Ավստալիայի առաջարկությունը՝ կատարել փոփոխություն INFCIR/546 փաստաթղթի 41.-րդ հոդվածի կետ 2.-ում և սահմանել դիտարկման հանդիպման ժամանակ աշխատանքային խմբերի քննարկմանը ներկայացվող առաջարկությունների ԱԷՄԳ ուղարկման վերջնաժամկետ:
- Կանադայի առաջարկությունը՝ պահանջել ԱԷՄԳ-ի քարտուղարությունից, որ դիտարկվի Համատեղ կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների հետ տեսակոնֆերանսի հնարավորության տարբերակը, ինչպես արդեն նախատեսված է Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների համար:
- ԱՄՆ-ի և Միացյալ Թագավորության առաջարկությունը՝ Համատեղ կոնվենցիայի կազմակերպական հանդիպման ժամանակ աշխատանքային խմբերի ղեկավարների ընտրական գործընթացի վերաբերյալ (INFCIRC/603/Rev.7 Հավելված 1):
- Միացյալ Թագավորության և Ավստալիայի առաջարկությունը՝ փոփոխություններ կատարել Համատեղ կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից վերջին ազգային հաշվետվության ներկայացումից հետո երկրում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափում (INFCIRC/604/Rev.3):
- ԱՄՆ-ի առաջարկությունը՝ վերանայել դիտարկման հանդիպման ժամանակ աշխատանքային խմբի համակարգողի դերն ու պարտականությունները (INFCIRC/603/Rev.7 Հավելված 1):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ապահովելու համար Հայաստանի Հանրապետության կողմից Համատեղ կոնվենցիայի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարումը և հաշվի առնելով 6-րդ դիտարկման հանդիպման ժամանակ արձանագրված առաջարկություններն ու մարտահրավերները, առաջարկվում է.

1. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը.

ա) ապահովել ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի նիստի N 42 արձանագրային որոշմամբ հաստատված «ՀՀ-ում առաջացած ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարության» դրույթների կատարումը.

բ) ապահովել «ՀՀ-ում առաջացած ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող 2018-2026թթ. միջոցառումների ծրագիրն ու ծրագրի իրականացման համար մշակված գործողությունների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը կառավարության հաստատմանը և հաստատումից հետո դրանում ներառված գործողությունների իրականացումը.

գ) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության առաջին էներգաբլոկը շահագործումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը և դրա հաստատումից հետո վերանայել ՀԱԷԿ-ի շահագործումից հանման ռազմավարությունը հաստատված ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի նիստի N 48 արձանագրային որոշմամբ և ՀԱԷԿ-ի շահագործումից հանման նախնական պլանը.

դ) Ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգությունն ապահովելու համար բավարար ֆինանսական միջոցների ստեղծման նպատակով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել առաջարկություն վերանայելու «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում կատարած գործունեության համար սակագնի հաշվարկը և նախատեսել ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման համար անհրաժեշտ ծախսերի կատարումն ապահովող մասհանումներ.

ե) Սահմանել աշխատած վառելիքի կառավարման վերջնակետը (endpoint):

2. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին.

ա) շարունակել ՀՀ օրենսդրական և կարգավորող դաշտի վերանայումն ու լրամշակումը՝ համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին.

բ) ավարտին հասնել կարգավորող մարմնի գործունեության դիտարկման ԱԷՄԳ-ի IRRS (Integrated Regulatory Review Services) առաքելության կողմից տրված առաջարկությունների և խորհուրդների իրականացման 2015-2018 թթ. գործողությունների ծրագիրը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարությանը.

ա) մշակել ՀՀ-ում ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման գծով կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրեր՝ ուղղված նվազեցնելու

կախվածությունը միջազգային փորձագիտական օգնությունից: Ծրագրերը համաձայնեցնել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի հետ:

Համատեղ կոնվենցիայի 6-րդ դիտարկման հանդիպման աշխատանքային 6-րդ խմբի զեկուցողի զեկույցը տեղադրված է ԱԷՄԳ-ի <https://jc.iaea.org> կայքում:

Նելլի Աղաջանյան

Ստորագրությունը, ամսաթիվը

30.05.2018թ.